

գէշ վարուեցաւ: Այն ատեն Ճըրճան (Վըրաստան) ու Մանարները ապստամբեցան. անոնց դէմ բանակ մը ղրկեց որ ջարդուեցան: Ապա անոնց դէմ ղրկեց Սայիտ Իպն Ալ-Հայթհամ Իպն Շոպա Իպն Տահիր Ար-Բամիդին մեծ բանակով մը, որ պատերազմեցաւ Ճըրճանցիներուն եւ Մանարներուն դէմ, մինչեւ որ երկրէն հեռացուց ղրկեց եւ զնաց Թիֆլիս:

Ուղղալով Իպն Սադըմ հազիւ տարի մը կեցաւ. յետոյ հեռացուց ղինքը ու տեղը դրաւ Սիւլէյման Իպն Եգիտ Իպ Ալ-Ամըրին, որ բարի եւ թոյլ ծերունի մըն էր, այն աստիճանի թոյլ՝ որ քիչ մնաց երկիրը կորսնցնէր: Ար-Բաշիտ անոր տեղ կառավարիչ կարգեց Ալ-Ապպաս Իպն Զուֆար Ալ-Հիլալին, որու դէմ ապստամբեցան Մանարները: Ինք անոնց դէմ կռուեցաւ ու յաղթուեցաւ: Ար-Բաշիտ անոր տեղ ղրկեց Մուհամմէտ Իպն Զուհայր Իպն Ալ-Մուսայայ Ատ-Տապպին, որ Ար-Բաշիտի վերջին կուսակալը եղաւ Հայաստանի վրայ⁽³⁵⁾:

Եագուպի, Բ. 515-519

23.

Ամին խալիֆան եւ Հայերը
Ամին (809-813) Հայաստանի կառավարիչ կարգեց Ասսու Իպն Եգիտ Իպն Մադիտը: Երբ ասիկա հասաւ, երկրին դա-

ւառներէն մէկուն տիրապետած էր Շահիա Իպն Սայիտ, որ առաւօտեան աստղ (Քառաբայ Աս-Սուպհ) կը կոչուէր. եւ Իսմայիլ Իպն Շայիպ՝ Մուհամմէտ Իպն Մուհամմէտի ազատագրուած ստրուկը: Երկուքն ալ Վրաստան կը գտնուէին, Ասիտ խորամանկութեամբ ձերբակալեց զանոնք, բայց յետոյ անոնց վրայ զթալով արձակեց: Ասիտ լաւ նկարագիր ունէր ու առատաձեռն էր: Յետոյ Մուհամմէտ (Ամին) խալիֆան ղինքը հեռացուց, եւ Հայաստանի վրայ կառավարիչ կարգեց Իսհակ Իպն Սիւլէյման Ալ-Հաշիմին, որ իր որդին Ալ-Փատհըլը հոն փոխանորդ ղրկեց, եւ նա հոն մնաց պաշտօնանկին (Ամին խալիֆային) օրերուն:

Եագուպի, Բ. 528

24.

Մոհամմէտ Իպն Ալ-Մուսայըպ
Հայաստանի կառավարիչ

Ամինի վրայ տիրապետողն էր Իսմայիլ Իպն Սապիհ Սառանցին եւ Ալ-Փատհըլ Իպն Ար-Բապիյ. իսկ ոստիկանութեան պետն էր Մուհամմէտ Իպն Էլ-Մուսայըպ՝ զոր յետոյ հեռացուց ու կարգեց Հայաստանի կառավարիչ, տեղը ղնելով Մուհամմէտ Իպն Համդա Իպն Մալըք:

Եագուպի, Բ. 537

Բնագրէն քարգմանեց
Հ. Ա. ԱԳԱՄԵԱՆ

(35) Ղեւոնդ, Գլ. ԽԱ. էջ 166-170: Յովհաննէս Կաթողիկոս, Գլ. ԻԴ. էջ 142-143: Ստեփանոս Ասո-

ղիկ, տպ. Պետերբուրգ, 1885, Բ. հանդէս, Գլ. Բ. էջ 106:

ՀԱՌԻՃՈՅ ՎԱՆՔԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քանի մը տարի առաջ Պոլսէն գընում՝ այժմ հանդուցեալ գրականագետ Պիմէն Զարգարեանի բաղձաթիւ հին ու նոր ձեռագիրներուն մէջ կան կարգ մը շահեկան ձեռագիր տետրակներ, որոնցմէ մէկը կը վերաբերի Հառիճոյ վանքին արձանագրութիւններուն, եւ ունի սա խոճաղիրը. Արձանագրութիւնք վանքից Հառիճոյ որ ի Շիրակ գաւառի:

Տետրակս գրուած է նոտր գրով, ուսական դրոշմանիչով թուղթի վրայ, ընթեռնի է, թէեւ ունի համառոտագրութիւններ՝ որոնք կ'երեւի թէ արձանագրութեանց մէջ իսկ կային: Տետրակը, առանց որեւէ կաղմի, կը բաղկանայ կարում 12 թերթերէ կամ 24 էջերէ:

Տետրակիս պարունակութիւնը համեմատեցի անմահն Ալիշանի Շիրակի մէջ հրատարակածներուն հետ, եւ գտայ ինչ ինչ տարբերութիւններ եւ նոյնիսկ պակասներ, որով աւելորդ չեմ նկատեր զառնոյր հոս վերադառնալ հրատարակել, իւրանոյր հոս վերադառնալ հրատարակել հետ տալով քանչիւր արձանագրութեան հետ տալով Ալիշանի հրատարակութեան տարբերութիւնները:

Տետրակը անտարակոյս պատրաստուած է տեղւոյն վրայ արձանագրութիւնները է կարգացողէ մը, որուն ինքնութիւնը ծաղկաթ է: Տետրակին արձանագրութիւնները նոթ է: Տետրակին արձանագրութիւնները կը հրատարակեմ տետրակին մէջ իրենց կը հրատարակեմ իւրեւնդ իւրեւնդ ծանոթութիւններով: Տրուած թուահամարները իմա են:

Ա.

« Ի ճակատ հին եկեղեցւոյն զոր յանուն Սրբոյն Գրիգորի կառուցեալ է, բայց երբն անյայտ »:
Ես սարգիս ճոնս շինեցի գեկեղեցիս եւ ի քրտանց իմ ետու այլ ըմծայ ի ս(ուր)բ ուխտս եւ Հայր համագապս սահմա-

նեաց որ ի սարգիս եւ ի քաղոսի տաւնին: Բ: աւր պատարագեմ գ(ր)իստոս յիմ անուն. ով խախանէ դատի ի Տ(եառ)նէ:

Հ. Ալիշան հրատարակած է ասիկա Շիրակի մէջ, էջ 158: Ահաւասիկ տարբերութիւնները: Ճոն: քրտանց իմոց: տաւնի: Հ. Ալիշանի հրատարակութեան մէջ կը պակսի ով խախանէ դատի ի Տեառնէ:

Բ.

« Ի վերայ արտաքին որմոյ ի կողմն արեւելեան հարաւոյ »:

Ես շատ ախէկ միաբանեցայ ս(ուր)բ ուխտիս. Հայր Համագապս եւ այլ եղբարքս հաստատեցին որ ի մահու իմ գիմ միաբանութիւնն առնեն անպատմառ ով իմի:

Հ. Ալիշան հրատարակած է. Շիրակ, էջ 159բ. լուսանցքին տակ: Միակ տարբերութիւնը: Համագապս եւ այլ եղբարք:

Գ.

« Մերձ ի սա »:

Ես գրիգոր որդի քոյի միաբանեցայ ի ս(ուր)բ ուխտս ուր մեռանիմ գիմ հակն կատարեն անպատմառ ով իմի:

Շիրակի մէջ չէ հրատարակուած ասիկա:

Դ.

« Մերձ ի սա »:

Ես գրիգոր առաջնորդ ս(ուր)բ ուխտիս հառիճայի շինեցի գտեղի սնկեան իմոյ ի ձ (100) ամեայ կործանմանէն եւ կարգեցի ի սա արս ընտրեալս եւ խրատեալս արիւնաւքն Ա(ստուծոյ) եւ հաստատեցի կամակցու(քեամ)ք եղբարք,

եթէ ո՞ք առաջնորդաց ի յընձայից եկեղեցւոյս խորէ եւ զվաստակս բազմաց եւ գտուրս հոգոց իւրն համարի որչափ ա(ստուա)ծ արւնած է, այնչափ նգոված է որ կաշառաւ հայի մտէ կրկին նգովի:

Տետրակիս գրողը այս արձանագրութեան վերջը գրած է աստղանիշ մը:

Շիրակ-ի մէջ, էջ 159: Տարբերութիւնք: հարկւրամեայ: Կը պակսի ի ՍԱ (արբւ ընտրեալս...): յառաջնորդաց: տուրս: կաշառով հայի(?) կրկին նգոված է:

Ե.

Տետրակիս գրիչը թիւ Դ-ին վերջը նշանակած է աստղանիշ մը, որուն համար լուսանցքին տակ կը գրէ:

«Շիրակ սորա գտանի ի գերեզմանատան Ղազարու որոյ դամբանագիր է այսպէս ի վերայ կարմիր քարի»:

Այս հանգիստ է երգանիկ ծերունի ա(ուր)ք հաւր Գրիգորի առաջին առաջնորդի երկրորդ շինու(թ)ե(ան) ա(ուր)ք ուխտիս որ էր ուսուցիչ եւ արիւնակ բարեաց ամենեցուն աղաչեմք որք երկրպագէք ա(ր)ք(ն)յ խաչիս ասացէք ա(ստուա)ծ յիշեցէ զհայր Գրիգոր յոգորմու(թ)ե(ան) իւրում եւ զգրիչս եւ դուք յիշեալ լիջիք ի ք(րիստո)սէ. ամեն. ի ք(վին) Հ(այոց) ՈՒԷ (1188) գր(եալ):

Հրատարակուած Շիրակ, էջ 163: Տարբերութիւններ: Այս է հանգիստ: Կը պակսի առաջին (առաջնորդի): քարի (ամենեցուն): ՈՒԴ (1185):

Թուականի այս տարբերութիւնը յառաջ կու գայ արձանագրութեան մէջ Դ եւ է գրերուն համանմանութենէն:

Զ.

«Ներքոյ սորա» (թիւ Դ.ի): Կամաւն Ա(ստուծո)յ մեք Հառինեցիս

Հայր Պետրոս եւ այլ եղբարքս սահմանեցաք ի տաւանի տապանակին ի մի մատուռն պատարագել զք(րիստո)ս յանուն Գրիգորոյ փոխանակ արդեանց որք կատարին արիւնակ եղիցին եւ որք ոչ նրգովս ժառանգեցեն ի ք(րիստո)սէ: Թ(վին) Ո. Խ. Ա. (1191):

Հրատարակուած Շիրակ, էջ 159, ծանոթութիւն 1: Միակ տարբերութիւնը: արդեանց իւրոց:

Է.

«Ներքոյ սորա»:

Ի ք(վին) ՈՒԵ (1196). Եւ առաջնորդու(թ)ե(ան) Հաւր Պետրոսի. Եւ Ա(ստուա)ծատուր Ետուր զիմ հայրէն այգինս որ յարունի վերին քաղ զհաչկանց այգին եւ զընձանն էտու ի ա(ուր)ք ուխտս Հառինայո ի ա(ուր)ք Գրիգորս եւ ա(ուր)ք յա(ստուա)ծածինս եւ առաջնորդք ա(ուր)ք ուխտիս խոստացան ինձ ի տարոջն. Բ. արք ժամ. Ա. արք իմ հաւրն շիկին եւ: Ա. իմ մարն վարդաւենէ. Եթէ ո՞ք զլանա եւ չառնեն ի տաւանի ա(ր)ք(ն)յն սարգսի նգովեցի յա(ստուծո)յ եւ որք կատարեն արիւնի յա(ստուծո)յ:

Հրատարակուած Շիրակ, էջ 159, ծան. 1: Տարբերութիւններ: Թ(վին): Կամաւն Աստուծոյ Եւ Աստուածատուր Ետուր զիմ հայրէն այգիս որ յԱրուն ի վերին ի: Հառինայի ի: տաւոջն: գմէկ: մարն Նվարքին: զլանայ: նգովեցին: արիւնին:

Ը.

«Կից սորա»:

Ի ՈՒԵ (1196) քուականիս. Եւ Գրիգոր վարդապետս որդի տուտայ Ետուր ըզա(ուր)ք նշանս լուսո կրկին պահարանով երիս մասն զգրավականս հոգո իմոյ ի ա(ուր)ք Ա(ստուա)ծածինս Հառինայի պարտական են ինձ զմիաբանու(թ)ի(ւն). Գ. Բառասունս եւ զգառկին նրագալուցին: Ա. Ժամարար որ-

չափ ուխտս ի հաստատու(թ)ե(ան) է եւ որ հանէ զսա ի ա(ուր)ք ուխտէս զինչեւիցէ պատմաւանաւ նգոված է յա(ստուծո)յ եւ ամենայն սրբոց ամեն. տուա ի ձեռն Հաւր Պետրոսի որք բընակէք ի ա(ուր)ք տեղիս եւ կարդայք զգիրս պետրոսի եւ հոգո եւ մարմնո ծնողաց իւրոց եւ եղբարք քոզուքի(ւն) մեղաց խնդրեցէք ի ք(րիստո)սէ աղաչեմք:

Հրատարակուած Շիրակ, էջ 158–159: Տարբերութիւններ: ՈՒԵ (1191): հոգւոյ: Հառինայո: միաբանութեան: զատկի: Ժամարար?: Հայր: հոգոյ եւ մարմնոյ: աղաչեմք:

Թ.

«Ի մէջ եկեղեցւոյ ձախակողմեան դարանի վերնայարկին ի վերայ աջակողմեան որմոյ»:

Ի Թ(վին) ՈՒԵ (1201). Կամաւն ա(ստուծո)յ. Եսա. եւ տիկին միաբանեցա ա(ուր)ք ուխտիս Ետուր զմարգագետինն ի ա(ուր)քս որ ի կոռ սոփա հաստատեի ի տարին. Գ. արք ժամ. Բ. իմ տիւրոյնստ սկէս. ի Ա. ինձ. Ա. Գոհարին ի տաւանի յովանու եթէ չառնեն, ՅԺԸ (318) նգովե...

Ձէ հրատարակուած Շիրակ-ի մէջ:

Ժ.

«Ի վերայ Աստուածամօր Տաճարի արտաքին հիւսիսային որմոյ»:

Հոս չեմ արտադրեր այս երկար արձանագրութիւնը, քաբարէ Ամիր սպասալարի, որ հրատարակուած է Շիրակ-ի մէջ, էջ 161: Ունի քանի մը անկարեւոր տարբերութիւններ միայն:

ԺԱ.

«Արտաքուստ՝ յանկեան վերայ արեւելեան հարաւոյ»:

Կեղոյս, Տ(է)ր Ա(ստուա)ծ ոգորմեա աշխատարաց, Ամեն:

Շիրակ-ի մէջ էէ հրատարակուած:

ԺԲ.

«Ի ճակատ, Սրբոյ Տաճարին»:
Շնորհիւ Ա(ստուծո)յ Ես զաբարէ ամիր սպասալար շինեցի զկաթուղիկէ:

Հրատարակուած է Շիրակ-ի մէջ, էջ 159: Միակ անհշան տարբերութիւն մը: զկաթուղիկէս:

ԺԳ.

«Ներքոյ սորա»:

Ի քու(ին) ՈՒԳ (1214):
(Կամաւն... Եւն... Գ: Բառասուն(նք) ապաշխարողի: Բ. ի մարդն: Ա: ար... Եւն.):

Հրատարակուած Շիրակ, էջ 160: Տարբերութիւն չկայ բացի միայն վերը յառաջ բերուած մասէն, որով աւելորդ նկատեցի ամբողջ արձանագրութիւնը տալ հոս:

ԺԴ.

«Ի սոյն կարգի յաջակողմն»:

Տուտիկի արձանագրութիւնը որ հրատարակուած է Շիրակ-ի մէջ, էջ 161, ծանոթութիւն 2: Տարբերութիւն չըլլալուն՝ աւելորդ նկատեցի հոս վերահրատարակել:

ԺԵ.

«Ներքոյ սորա»:

Կամաւն Ա(ստուծո)յ: Եւ աշխարհակալութե(ան) եղանայ Ղան Ղազանին: Եւ եղիստիւր որդի չաղանին եւ իմ որդի ապաշխարողիս իմ խաբունս խոգքիւ միաբանեցաք ի ա(ուր)ք Ա(ստուա)ծածինս եւ զմեր բաժին գանձով միքի հանքն տուաք եկեղեցւոս լոյս լուսով ըլննի ոչ իմ որդու ոչ իմ աղբար ոչ իմ ազգի մարդոյ դարի չկայ, ով դարի

արնէ յա(ստուծոյ) եւ ի փեղամպարաց
նալաք է կատարիչքն արքինն յա(ս-
տուծոյ) ի ք(ուին) 229 (1334):

Հրատարակուած Շիրակ, էջ 162: Տար-
բերութիւններ: Եղումայ: Իշխութիւն(?):
Աբաշէ: Խոդիւ: ճիւղահանքն: Ընկ(?):
Եղար: անէ: Փէղամպարայ: 229
(1304):

Անտարակոյս որ տետրակին 229
(1334) չի կրնար ճիշտ ըլլալ իբր Իւ Ղան
Ղազան Ղանին ժամանակակից թուական,
որ զահակալէջ 1292էն 1304:

ԺԶ.

« Հեռի ի սոցանէ, յաջակողմեան ան-
կեան »:

Այս ՈՀ (1221) թուականաւ Վաչէի ար-
ձանագրութիւնը հրատարակուած է Շի-
րակ-ի մէջ, էջ 161, ծանօթ. 1, առանց
կարեւոր տարբերութեան:

ԺԵ.

« Ներքոյ սորա »:

Այս ալ հրատարակուած է առանց տար-
բերութեան. Շիրակ, էջ 161, ծանօթ. 3:

ԺԸ.

« Սոյն որմոյ ի վերայ ձախակողմեան
անկեան »:

Ա(ստուա)ծաւէր եւ արդիւնաւոր պատ-
րոնն Հիջուպ Վախրամ շինեաց գլայե-
լուրջ ժամատունս եւ երեք գլխու ջուրս
յիշատակ հոգւոյ իւրոյ եւ գաւակաց
իւրոց եւ ամուսնոյ իւրո թաւարին եւ
Տ(ե)ր յովհաննէս միաբանաւս ի խըն-
դոն դառնին իւրո հաքունին հաստա-
տեցին ի տաւնի քէոքոս քաղաւորին
գլխայն եկեղեցիքս անուն թաւարին
պատարագել գգ(րիստո)ս անխափան
կատարիչքն արքինն յաստուծոյ: Թվին:

Հրատարակուած Շիրակ, էջ 162: Տար-
բերութիւններ: Հիջուր: Ըգլայեղուր: հո-

գո: ամուսնո: Եւ տէր Համագասպ եւ
Հայր Յովհաննէս: ի խնդրոյ: գաւեմայն
եկեղեցիքս յանուն: արքինն:

Իսկ Թվին վաղադրութիւն մըն է: Ար-
ձանագրութեան արական կամ կոտորած մաս
էն նշանակուած Թվին վաղադրութեանէն
վերջ: Կարելի է խորհիլ որ Թվին վաղա-
դրութեան մէջ աղուցուած ըլլայ նաեւ ՈՀ
կամ ՈՂ, սակայն աւելի հաւանաբար ՈՀ
(1221) թուականը:

ԺԹ.

« Ի մէջ ժամատան ի վերայ հարաւա-
յին որմոյ »:

Հրատարակուած է Շիրակ, էջ 162,
ծանօթ. 1: Հ. Ալիշան կախման կէտերով
պական թողուցած է արձանագրութիւնը,
որ կ'ամբողջացնէ տետրակէն: ... պա-
տարագ: Ա: յորս յանուն եւ Բ: ... Իսկ
տպագրութեան ... Խաչգիւտի շաքաք
արքն ... ի տեղ տետրակը ունի ... Խաչ
գոյտի արքն ...:

Տպագրութեան մէջ արձանագրութեան
կցուած է « Ի թվ. ՈՀ9 (1224) », մինչ
տետրակին համաձայն այս թուականը զե-
տեղուած է ԺԹ. արձանագրութեան յա-
ջորդող (ներքեւի) արձանագրութեան զը-
լուրը: Տես ստորեւ:

Ի.

« Ի ներքոյ սորա » (ԺԹ. ին):

Ի քու(ին): ՈՀ9 (1224):

Շիրակ-ի էջ 162, ծանօթ. 1 արձանա-
գրութեան նման միայն հրատարակութեան
կախման կէտերուն տեղ պէտք է աւելցնել
տետրակին ... պոնին ... որ որոշապէս
կրնայ պարունին կարգացուիլ: Իսկ տպա-
գրութեան Բանուհաշին ? տետրակին մէջ
կը կարգացուի Բանուշահին:

Տպագրութեան կու տայ նաեւ « Ի թուիս ՈՀ9
(1234) », որ տետրակին համաձայն ներ-
քեւը զտնուող յաջորդ արձանագրութեան
սկիզբին կը պատկանի:

ԻԱ.

« Ներքոյ սորա »:

Ի քուիս: ՈՀ9 (1235):

Եւ արւէն սնուցած պարուն նրջնին ըն-
ծայեաց արդիւնք ի ս(ուր)ք ուխտս: Բ:
արք պատարագ ինձ ու: Ա: խոշուշին
կատարեն գլխատակս մեր:

Տպագրութեան վերջ նոյն: Տարբերու-
թիւն: Նրջնին ընծայեցի արդիւնս ի
սուրք ուխտս: Խոշուշին:

ԻԲ.

« Ի մէջ ժամատան ի վերայ հիւսիսային
որմոյ »:

Կամաւն Ա(ստուծոյ): Եւ սանասարս
եւ պաղտասարս որդիք հոքապասարին ի
յառաջնորդութեան(ան) Հար Համագաս-
պայ ընծայեցաք ի ս(ուր)ք ուխտս գլխ
Հայրենի դրամագին այգին որ ի Նորա-
շէնիկ արդ ուլ հակառակ կայ կամ խստի
մերոց կամ յօտարաց նգովս աոցէ ի
Տ(եառ)նէ Յ(իւր)աւ: Եւ Հայրս եւ
միաբանս սահմանեցին որ յետ ա(ստ-
ուա)ծածնին: Ժ: արք պատարագ: Բ:
Խուպասարին: Բն: կիմայթին: Բն: յո-
վանիսին: Դ: սանասարին, ուլ յիշա-
տակս խափանէ դատի ի ք(րիստո)սէ ա-
մէն. հաստատեցաւ կտակս ի կասայ:

Հրատարակուած Շիրակ, էջ 163ա.:
Տարբերութիւններ: Բաղդասարս որդիք
Խուպասարին: Նորաշենիկ սրտով. ուլ:
կամ ի խըսմի մերոյ: միաբանս հաստա-
տեցին: Յովհաննէսին: յիշատակս մեր: ի
կամս Աստուծոյ:

Տպագրութեան մէջ կայ ի քուիս ՈՀ9
(1235) որ տետրակին մէջ յաջորդ յիշա-
տակարանին սկիզբը նշանակուած է:

ԻԳ.

« Ներքոյ սորա »:

Ի քուիս ՈՀ9 (1235):

Արձանագրութիւնը հրատարակուած է
Շիրակ, էջ 163բ. եւ միակ տարբերութիւ-
նը տպագրին առնեն-ի տեղ տետրակը ու-

նի յառնեմ, իսկ դատի ի քրիստոսէ-ի տեղ
ունի դատի տ(եառ)նէ:

ԻԴ.

« Ներքոյ սորա »:

Եւ սիմէոն յարդիւնք ետու ի ս(ուր)ք
Ա(ստուա)ծածնին եւ Հայր յովհաննէս
եւ հաստատաւ Բ, արք պատարագ ի
տաւնի ի ս(ուր)ք անտոնի: Ա: սիմէո-
նին եւ. Ա. Գրիգորոյ կատարիչքն արք-
նեալ եղիցին: Ամէն:

Շիրակ, էջ 163բ.: Տարբերութիւններ:
արդիւնք: Յովհաննէս եւ միաբանս
տուաւ: Սիմէոնի:

ԻԵ.

« Ի մէջ տաճարին ի ճակատ յաջակող-
մեան դարանին »:

Եւ արտեւան ծառայ ք(րիստոս)ի եւ
ամուսին իմ Նուրսի մեծ յուսով ստա-
ցաք գլխագոյրս ընծա ս(ուր)ք եկեղե-
ցոյս եւ սպասաւորք ս(ուր)ք ուխտիս
սահմանեցին մեզ յամենայն ամի: Դ:
արք պատարագ: Բ: արք ինձ եւ: Բ:
նուրսքէ ի տաւնի Համբարձմանն ան-
խափան կատարիչքն արքնեալ եղիցին
ամէն:

Շիրակ, էջ 162: Տարբերութիւններ:
ստացաք?: ընծայ եկեղեցոյս: չորս արք:
երկու Նուրսքին: Ի տաւնի Համբարձմանն
կը պակսի տպագրութեան մէջ արքնին
յԱստուծոյ:

☆

Ասկէ վերջ տետրակին մէջ կը տրուի.
« Արձանագրութիւնը Լճապատայ սուրբ
Ստեփաննոսի վանից որ մերձ գոլով ի
գիւղն յԱրդիկ գտանի ի կողմն արեւմը-
տեան »:

Ա.

« Հիւսիսային կողման ի վերայ արտա-
քին որմոյ տեղանոյն »:

.ՈԿԵ (1216):

